նալ անդրէն 'ի շաւիղս մեր՝ որ զնի Մի-
խայելին 'ի Թուին Քրիստոսի ԻՃԴ.Օ.:

Գառլոս սկսաւ յամի Տեառն ՉԴ.Ի.
ըստ Ֆռանկաց Ձ.Ի.երրորդ կայսր՝ ինք-
նակալեալ ամս ԺԲ. և ամիս մի և Գ.
օր: Սա թագաւորեաց հրամանաւ Պապոյն.
զի 'ի Կոստանդիանոսէ մինչև 'ի սա՝ կայ-
սերութիւնն անցեալ էր 'ի Կոստանդնու-
պօլիս. և այժմ վերադարձաւ յարևմու-
տըս: Սա շինեաց ԽԴ. վանք, և եդ 'ի վե-
րայ սեմոց վանացն Է. Բ. Գ. Դ. մինչև Խ.
ԽԴ. գիրն ըստ Ֆռանկաց. և գրերն այնո-
քիկ էին ոսկի, և կշիռ ամեն գրի ԲՃ.
մսխալ էր: Յաւուրս սորա ելին տաճիկքն
յԱփրիկոյ, և աւերեցին զքաղաքն Ճէնո-
վա, և յաւարի առեալ զամենայն՝ գնացին
յաշխարհն իւրեանց: Սա ազատեաց զԵ-
րուսաղէմ 'ի Տաճկաց՝ անձամբ գնալով
անդ. և դարձեալ անտի հիւանդութեամբ
մեռանի յաթոռի իւրում:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան